Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազ՝
պարոն Արթուր Դավթյանին

<u>Դիմողներ՝</u>
Ներքոստորագրյալ քաղաքացիներից
(փաստաբաններից)

Ծանուցման հասցե՝ ք.Երևան, Մաշտոցի
33/1 շենք, թիվ 5 գրասենյակ

էլ. հասցե՝ info@lawgroup.am

30.03.2021թ.

ՀԱՂՈՐԴՈՒՄ
(ՀՀ քրեական օրենսգրքի 314[1]-րդ հոդվածով նախատեսված
հանցավոր արարքի կատարման
փաստի կապակցությամբ)

I. Հանցագործության մասին հաղորդման փաստական հանգամանքները.

1. Արմեն Սարգսյանը 2003 թվականից մինչև 2012 թվականը՝ առնվազն տաս տարի հանդիսացել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության քաղաքացի և ունեցել է ՄԹ-ում ընտրելու իրավունք: *Նշված փաստը հաստատվում է կից ներկայացվող 10.03.2021թ. զեկույցի քաղվածքով:*

2. 2013-2018թթ. Արմեն Սարգսյանը Միացյալ Թագավորությունում հանդիսացել է Հայաստանի Հանրապետության դեսպան: *Նշված փաստը հաստատվում է նախագահի պաշտոնական կայքի հրապարակմամբ:*[1]

3. 23.02.2018թ. Արմեն Սարգսյանը գրավոր համաձայնություն է ստորագրել ուղղված ԱԺ նախագահին՝ ՀՀ նախագահի թեկնածու առաջադրվելու մասին: *Նշված փաստը հաստատվում է կից ներկայացվող համաձայնության պատճենով:*

4. Արմեն Սարգսյանը ներկայացրել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի 22.02.2018թ. տեղեկանքը՝ վերջին վեց տարում միայն ՀՀ քաղաքացի հանդիսանալու և վերջին վեց տարում ՀՀ-ում մշտապես բնակվելու մասին: *Նշված փաստը հաստատվում է կից ներկայացվող տեղեկանքի պատճենով:*

5. Արմեն Սարգսյանը ՀՀ ոստիկանությանը չի հայտնել իր Միացյալ Թագավորության քաղաքացիության մասին: *Նշված փաստը հաստատվում է ՀՀ ոստիկանության ԱՎՎ գրությամբ:*

6. 2018թ. մարտի 2-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընտրվել է Հայաստանի Հանրապետության նախագահ:

7. 2018 թվականի մարտի 2-ի դրությամբ Արմեն Սարգսյանը չի բավարարել ՀՀ Սահմանադրության 124-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վերջին վեց

[1] https://www.president.am/hy/armen-sarkissian/

տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու պահանջը:

8. ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանին ուղղված հարցման ժամանակ, վերջինիս աշխատակազմի ղեկավարը քաղաքացիության վերաբերյալ հարցը փակել է ՀՀ ոստիկանության համապատասխան տեղեկանքի վկայակոչմամբ, ինչը հերքվել է ՀՀ ոստիկանության համապատասխան գրությամբ:

<u>II. Հանցագործության մասին հաղորդման իրավական հիմքերը և հիմնավորումները.</u>

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 314[1]-րդ հոդվածի[2].

«*Այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում օրենքով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին չհայտնելը Հայաստանի Հանրապետության այն քաղաքացու կողմից, որը հավակնում է այնպիսի պաշտոն զբաղեցնելու, որն զբաղեցնելն օրենքով արգելված է այլ պետության քաղաքացի հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, ինչպես նաև այն պաշտոնատար անձի կողմից, որը, օրենքի համաձայն, չէր կարող լինել նաև այլ պետության քաղաքացի՝*

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

Ակնհայտ է, որ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների **<u>օբյեկտը</u>** պետական ապարատի (կառավարման հանրային ապարատի) նորմալ գործունեությունն է:

Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի խնդիրն արդիական է, քանի որ այդ հանցագործությունները վնաս են հասցնում տնտեսությանը, պետական ապարատի բնականոն գործունեությանը, պետական իշխանության հեղինակությանը և պայմաններ են ստեղծում այլ ծանր հանցագործությունների համար:

Այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում օրենքով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին չհայտնելու **<u>օբյեկտիվ կողմը</u>**, դրսևորվում է հետևյալ վարքագծով՝

1) ՀՀ քաղաքացին ստացել կամ ընդունել է այլ պետության քաղաքացիություն.
2) ՀՀ քաղաքացին հավակնում է այնպիսի պաշտոն զբաղեցնելու, որն զբաղեցնելն օրենքով արգելված է վերջին վեց տարում այլ պետության քաղաքացի հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին.
3) ՀՀ քաղաքացին օրենքով սահմանված ժամկետում չի հայտնել այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին:

---

[2] Հոդվածը գտնվում է ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ գլխում՝ «Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները» վերնագրով

Վերը նկարագրված փաստական տվյալներն առերևույթ հիմնավոր կասկածներ են առաջացրել, որ տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվել է մասնավորապես ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի հետևյալ վարքագծով՝

1) Ա.Սարգսյանը 2003թ. ստացել կամ ընդունել է Միացյալ Թագավորության քաղաքացիություն և մինչև 2012թ. ունեցել է այդ քաղաքացիությունը.
2) Ա.Սարգսյանը 2018թ. փետրվարին հավակնել է ՀՀ նախագահի պաշտոնին, որն զբաղեցնելն օրենքով արգելված է վերջին վեց տարում այլ պետության քաղաքացի հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին.
3) Ա.Սարգսյանը այդ մասին ընդհանրապես չի հայտնել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին:

Վերլուծությունն ըստ հիշյալ կետերի՝

1) Արմեն Սարգսյանը 2003-2012թթ. առնվազն 10 տարվա Միացյալ Թագավորության քաղաքացիություն է ունեցել, ինչը հաստատվում է համապատասխան զեկույցի քաղվածքով:

2) ՀՀ նախագահի պաշտոնը չի կարող հավակնել այն ՀՀ քաղաքացին, որը վերջին վեց տարում չունի միայն ՀՀ քաղաքացիություն:

ՀՀ Սահմանադրության 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Հանրապետության նախագահ կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, **<u>վերջին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող</u>**, վերջին վեց տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք*:

ՀՀ ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի 134-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *ազգային ժողովի կողմից ընտրվող պաշտոնում թեկնածուների առաջադրման փաստաթղթերի ցանկը սահմանվում է Աշխատակարգով:*

ՀՀ ազգային ժողովի 16.12.2016թ. թիվ ԱԺՈ-267-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգի (**այսուհետ՝ Աշխատակարգ**) 91-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ *Հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելու մասին պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի գրավոր դիմումին կցվում են թեկնածուի՝*

*2) **<u>վերջին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու</u>** և վերջին վեց տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին տեղեկանքը,*

*5) պաշտոնում ընտրվելու համար **<u>գրավոր համաձայնությունը</u>**:*

Արմեն Սարգսյանի կողմից այդ պաշտոնին հավակնելը դրսևորվել է նաև իր կողմից 23.02.2018թ. տրված գրավոր համաձայնությամբ:

3) Արմեն Սարգսյանն իր Միացյալ Թագավորության քաղաքացիության մասին ընդհանրապես չի հայտնել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին:

«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *ռեգիստրում մշակվում են բնակչի հետևյալ անձնական տվյալները՝ 8) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը և (կամ) օտարերկրյա պետության քաղաքացիությունը և Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունքը հավաստող փաստաթղթի տվյալները (տեսակը, համարը, տալու ամսաթիվը, վավերության ժամկետը և տրամադրող մարմինը)*:

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ Ա.Մկրտչյանի 25.03.2021թ. գրությամբ հայտնվել է հետևյալը.

- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրում ***<u>ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի այլ պետության քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ տեղեկատվություն առկա չի եղել</u>***[3], այդ թվում՝ 2018թ. մարտի 2-ի դրությամբ: ՀՀ ոստիկանության ԱՎՎ բնակչության պետական ռեգիստրում համապատասխան տվյալները մշակվում են քաղաքացու տրամադրված կամ ՀՀ իրավասու մարմիններից ստացված տեղեկությունների հիման վրա: Օտարերկրյա պետության քաղաքացիությունը համարվում է մշակման ենթակա տվյալ և մուտքագրվում է ռեգիստր, եթե անձը ներկայացնում է այլ պետության քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ:
- ՀՀ նախագահի ընտրության համար Ա.Սարգսյանին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու մասին տեղեկանքը տրվել է հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրում առկա տեղեկատվությունը և ***<u>Արմեն Սարգսյանի կողմից իր դիմումում նշված՝ այլ պետության քաղաքացի չհանդիսանալու վերաբերյալ հայտարարությունը</u>***: Այս կապակցությամբ հարկ է նշել նաև, որ որևէ իրավական ակտով սահմանված չէ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալը ստուգելու այլ կարգավորումներ:

Պետական ծառայության դեմ ուղղված բոլոր հանցագործությունների **<u>սուբյեկտիվ կողմը</u>** բնութագրվում է մեղքի դիտավորյալ ձևով:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 314[1]-րդ հոդվածի **<u>սուբյեկտը</u>** հատուկ սուբյեկտ է և հանդիսանում է միայն ՀՀ համապատասխան պաշտոնի հավակնող ՀՀ քաղաքացին:

Քննարկվող դեպքում առկա են քրեական գործ հարուցելու և հիմքը և առիթը: Հանցագործության մասին հաղորդումը չունի վերացական բնույթ, ներկայացված փաստական հանգամանքները իրենց բնույթով բավարար են հանցագործության հատկանիշների առնվազն արտաքին հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար:

---

[3] Տեքստում ընդգծումները մերն է

III. Պահանջը

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182 հոդվածով՝

խնդրում ենք՝

- հարուցել քրեական գործ վերը ներկայացված փաստերի առթիվ:

Տեղեկացված ենք հանցագործության մասին սուտ մատնության վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Առդիր՝

1. *10.03.2021թ. զեկույցի անգլերեն տարբերակը և վերաբերելի էջերի հայերեն թարգմանությունը՝ նոտարի թարգմանչի վավերացմամբ.*
2. *ՀՀ նախագահի կայքի քաղվածքը՝ ինքնակենսագրությունը.*
3. *Արմեն Սարգսյանի 23.02.2018թ. համաձայնության պատճենը.*
4. *ՀՀ ոստիկանության ԱՎՎ 22.02.2018թ. տեղեկանքի պատճենը.*
5. *ՀՀ նախագահին ուղղված փաստաբանների 10.03.2021թ. հարցման պատճենը.*
6. *ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի 15.03.2021թ. գրության պատճենը.*
7. *ՀՀ ոստիկանությանն ուղղված փաստաբանի 16.03.2021թ. հարցման պատճենը.*
8. *ՀՀ ոստիկանության ԱՎՎ պետի 25.03.2021թ. գրության պատճենը:*

Հաղորդում ներկայացնող փաստաբաններ՝

1. Արա Գագիկի Զոհրաբյան
2. Սիմոն Ալբերտի Բաբայան
3. Մանե Գուրգենի Կարապետյան
4. Մարիաննա Սերգեյի Մխիթարյան
5. Ստելլա Հովակիմի Բաղրամյան
6. Վահրամ Բեգոյան
7. Արաքս Վարդանյան
8. Քրիստինե Ավագյան
9. Լուսինե Աշոտի Սարգսյան
10. Վահագն Մովսեսի Քեշիշյան
11. Անդրանիկ Հակոբյան
12. Անժելիկա Հակոբյան
13. Արշակ Անդրանիկի Վարդանյան
14. Արմինե Գևորգի Կարապետյան
15. Հարություն Բաղդասարյան
16. Սարգիս Խաչատուրի Խաչատրյան
17. Լիանա Գրիգորյան

18. Վիկտորիա Պետրոսյան
19. Աննա Լեմսիկի Մանթաշյան
20. Անի Միհրանի Գրիգորյան
21. Ծովինար Կարապետյան
22. Սերգեյ Վաչագանի Մանուկյան
23. Հասմիկ Եղնիկի Մարտիրոսյան
24. Դավիթ Իսրայելյան
25. Լևոն Աշոտի Վարդանյան
26. Վրեժ Խաչիկյան
27. Նազելի Արամի Տեր-Պետրոսյան
28. Տաթևիկ Բուջատյան
29. Տաթևիկ Շայջյան
30. Գագիկ Մաիլյան
31. Սոնա Գուլակյան
32. Հրայր Խաչատրյան
33. Անժելա Գրիշայի Հովհաննիսյան
34. Գայանե Պապոյան
35. Լյուդվիգ Խորենի Ավետիսյան
36. Աստղիկ Ղազարի Ղազարյան
37. Կարինե Բաղդասարյան
38. Վարդուհի Սարգսյան
39. Անի Բարսեղյան
40. Աննա Վարդանյան
41. Ֆերդինանդ Սարգսյան
42. Գարիկ Ռաֆայելի Հախնազարյան
43. Շուշան Միհերի Հարությունյան
44. Աննա Արթուրի Ծառուկյան
45. Էդուարդ Բորիսի Աղաջանյան
46. Արմեն Մարտունի Հայրապետյան
47. Արտաշես Լեոնիդի Հովհաննիսյան
48. Արմինե Կառլոսի Ֆանյան
49. Հրայր Մերգելոսի Քալաշյան
50. Փափազ Խաչիկի Ավագյան
51. Դավիթ Գրիշայի Դանելյան
52. Լիաննա Գասպարյան
53. Պավլիկ Փոլադյան